

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ**

2017/2018 ուսումնական տարի

«ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**«ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ»
ԱՌԱՐԿԱՅԻ**

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

1. ՀՀ ապահովագրական շուկայի կարգավորման հարցում ՀՀ կենտրոնական բանկի դերը, գործառույթները և կիրառվող մեխանիզմները:
2. Ապահովագրական ընկերությունների կազմակերպահրավական ձևերը և վերջիններիս տարբերությունների ազդեցությունը ապահովագրական ընկերության գործունեության և կազմակերպման վրա:
3. Ապահովագրական շուկայի հնարավոր մասնակիցների դերակատարությունը և լիցենզավորման/գրանցման կարգը:
4. Ապահովագրական գործունեության լիցենզավորման գործընթացի նկատմամբ ՀՀ ԿԲ կողմից առաջադրվող պահանջները:
5. Ապահովագրական շուկայի մասնակիցների ղեկավար անձանց նկատմամբ ՀՀ ԿԲ առաջադրվող պահանջները:
6. Ապահովագրական ընկերության կառուցվածքային հիմնական ստորաբաժանումները և վերջիններիս գործառույթները:
7. Ապահովագրական ընկերության կառավարման մարմինները և ընդհանուր ժողովի իրավասությունները:
8. Ապահովագրական ընկերության կառավարման մարմինները և խորհրդի իրավասությունները:
9. Ապահովագրական ընկերության կառավարման մարմինները և ներքին աուդիտի ծառայության գործառույթները:
10. Ապահովագրական ընկերության կառավարման մարմինները և պատասխանատու ակտուարի գործառույթները:
11. Ապահովագրական ընկերության գործունեության պլանավորման իրականացումը ապահովագրական ընկերության կառավարման տեսանկյունից:
12. Ապահովագրական ընկերության գործունեության պլանավորման ընթացքում իրականացվող վերլուծությունների էությունը, տեսակները, նպատակները, արդյունքների կիրառումը, կանխատեսումները:

13. Ապահովագրողի գործունեության ծրագրում վերլուծվող նախորդ պլանային ժամանակաշրջանի խնդիրների կատարողականի վերլուծության հիմնական պահանջները:
14. Հսկողության համակարգի նպատակները, համակարգի ձևավորման համար պատասխանատու անձինք, ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերի հասանելիության շրջանակները:
15. Ապահովագրական ընկերության գործարար գործընթացների մշակման փուլերը ռիսկերի կառավարման տեսանկյունից, ապահովագրական ընկերության ներքին և արտաքին ռիսկերը:
16. Ապահովագրական ընկերությունում ռիսկերի բացահայտման, կանխարգելման և նվազեցման ներքին հսկողության գործիքները և ձևերը:
17. Հսկողության համակարգի նվազագույն պահանջները ռիսկերի ստանձնման, տեխնիկական պահուստների ձևավորման վերաբերյալ:
18. Հսկողության համակարգի նվազագույն պահանջները ապահովագրական հատուցումների և վերաապահովագրության վերաբերյալ:
19. Հսկողության համակարգի նվազագույն պահանջները ապահովագրողի ներդրումային գործունեության, դրամարկղային գործառույթների վերաբերյալ:
20. Ապահովագրական ընկերությունում ռիսկի կառավարման գործընթացի փուլերը, հսկողության համակարգի պահանջները պատվիրակման առումով:
21. Ապահովագրական ընկերության գործունեության ռիսկերի նկարագիրը և վերջիններիս կառավարման մեխանիզմները:
22. Ապահովագրողի ներդրումային գործունեությանը ՀՀ ԿԲ կողմից առաջադրվող պահանջները:
23. Ապահովագրողի կողմից իրականացվող վերաապահովագրության քաղաքականության էությունը, վերջինիս ազդեցությունը տեխնիկական պահուստների, ներդրումային ֆոնդի և ընկերության ֆինանսական արդյունքի վրա:
24. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի առումով ներքին հսկողության նվազագույն պահանջները, տեղեկատվական և հաշվետվողականության համակարգերը:
25. Ապահովագրական ընկերության ներքին աուդիտի ծառայության հիմնական գործառույթները, ներքին աուդիտի տարեկան աշխատանքային ծրագրի վերաբերյալ նվազագույն պահանջները, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունները:
26. Ապահովագրական ընկերության կողմից ձևավորվող պահուստների տեսակները, հաշվարկման մեխանիզմները և տնտեսագիտական էությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը /ՀՕ-239, 05.05.1998 թ/
2. Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին ՀՀ օրենքը /ՀՕ-177-Ն, 09.04.2007թ./
3. Ցամաքային տրանսպորտի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին ՀՀ օրենք /ՀՕ-63-Ն, 18.05.2010/
4. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին ՀՀ օրենք /ՀՕ-252, 24.10.2001/
5. Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենք
6. Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին ՀՀ օրենք
7. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքը
8. Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին ՀՀ օրենք
9. Կանոնակարգ 3/01-ը՝ «Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ապահովագրական կազմակերպության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնդրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարի, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը», որը կարգավորում է բնագավառում ընկերությունների լիցենզավորման, մասնագետների որակավորման հետ կապված հարցերը: /344-Ն, 30.10.2007/
10. Կանոնակարգ 3/02՝ «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» /311-Ն, 02.10.2007թ./
11. Կանոնակարգ 3/03՝ «Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» /312-Ն, 02.10.2007թ./
12. Կանոնակարգ 3/04՝ «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» /366-Ն, 16.11.2007թ./

13. Կանոնակարգ 3/10՝ «Ապահովագրական ընկերության ներքին աուդիտի գործունեության, ներքին հսկողության համակարգին ներկայացվող նվազագույն պահանջները» /163-Ն, 02.06.2009թ./
14. ՀՀ կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենք

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

15. Архипов А.П. “Финансовый менеджмент в страховании”, 2010
16. М.М. Пилипейко “Организация контроля в страховых организациях”, 2007